ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

(14.10.2014թ. կնքված N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲՇԱՀՎՁԲ-14/1 Անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին)

ՀՀ, ք. Երևան — Երկու հազար տասնչորս թվականի դեկտեմբերի 26-ին (26.12.2014թ.)

«ԱՐՄԵՆՄՈՏՈՐ» ՓԲ ընկերությունը, այսուհետ՝ Վարձատու, (Գրանցման համարը 286.120.05217, ՀՎՀՀ 00401878, Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խորենացու փողոց թիվ 28), ի դեմս գլխավոր տնօրեն Հարություն Պողոսյանի (նույնականացման քարտ 000750919, 02.12.2012թ-ին, 009-ի կողմից, հաշվառված՝ ՀՀ, ք. Երևան, Իսակովի 52/4 շենք, բն. 31), ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկի, այսուհետ՝ Վարձակալ, իրավաբանական հասցեն ք. Երևան Արշակունյաց 7, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վարդան Հարությանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, որի անունից հանդես է գալիս լիազորված անձ՝ Մամիկոն Գեորգիի Պիվազյանը (անձնագիր AM0705126, տրված 27.04.2012թ 011-ի կողմից, հաշվառված ՀՀ ք. Երևան, Զավարյան փ. 57/19 շենք, բն. 124), (Գրանցման համարը 01Բ001184, ՀՎՀՀ 02534328, Հասցե՝ ՀՀ., ք. Երևան, Արշակունյաց 7), այսուհետ միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով միմյանց միջև 14.10.2014թ-ին կնքված *14.10.2014թ. կնքված N ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲՇԱՀՎՁԲ-14/1* անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 10.1 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Կողմերը փոխադարձ համաձայնությամբ փոփոխում են. s

- Պայմանագրի 1.1 կետը՝ շարադրելով հետևյալ նոր խմբագրությամբ. *«Պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վարձավճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել ՀՀ, ք. Երևան, Կենտրոն համայնք, Մ.Խորենացի 28 հասցեում գտնվող 40054,3 (քառասուն հազար հիսունչորս ամբողջ երեք) քմ ընդհանուր մակերեսով շինությունից՝ 630,26 (վեց հարյուր երեսուն և քսանվեց) քմ տարածքը, հետագայում՝ Գույք, որը ներկայացված է Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 1-ում:»*
- Պայմանագրի 1.3 կետը՝ շարադրելով հետևյալ նոր խմբագրությամբ. *«Վարձատուն երաշխավորում է, որ սույն պայմանագրի 1.1 կետում նշած Գույքը, գրավի առարկա չի հանդիսանում, վաճառված, Վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է 18.12.2014թ. տրված US-18122014-01-0115 միասնական տեղեկանքով:»*
- Պայմանագրի թիվ 1 Հավելվածը՝ Համաձայնագրին կից ներկայացված թիվ 1 Հավելվածով:
- Պայմանագրի 3.1 կետը՝ շարադրելով հետևյալ խմբագրությամբ. *«Գույքի ամսական վարձավճարը սահմանվում է 2.583.000 (երկու միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:»*

2. Համաձայնագրով սահմանված փոփոխությունները ուժի մեջ են մտնում 2015թ-ի հունվարի 1-ից և գործում են մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:
3. Պայմանագրի մնացած դրույթները թողնվում են անփոփոխ:
4. Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
5. Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:
6. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները.

ՎԱՐՁԱՏՈՒ՝
«ԱՐՄԵՆՄՈՏՈՐ» ՓԲԸ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացի 28
Հաշվարկային հաշիվ՝ 2050022341311001
Բանկ՝ «Ինեկոբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00401878

Գլխավոր տնօրեն՝ Հարություն Պողոսյան

________________ Կ.Տ.

ՎԱՐՁԱԿԱԼ՝
ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ

Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 7
Հ/Հ 900013220026
Բանկը՝ ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02534328

Լիազորված անձ՝ Մամիկոն Գեորգիի Պիվազյան

____

Երկու հազար տասնչորս թվականի դեկտեմբերի քսանվեցին սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ ՀՀ Կենտրոն նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից: Համաձայնագիրը ստորագրվել է իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրողների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև ներկայացուցչի (ներկայացուցիչների) լիազորությունները ստուգված են:
ՀՀ [illegible] համաձայն սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում:

Գրանցված է սեղանամատյանում 6616 ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքների

Նոտար ________________